

զմեծ նուիրակ իւր յԱսորիս¹⁸⁶, գտանել ամենայնիւ հնարս իրաւախոհութեան. այլ Լեւոն՝ ՚ի գալ պատգամաւորաց ասպետացն՝ ոչ եւս կամեցաւ տեսանել զնոսա եւ ոչ առնել պատասխանի. քանզի եւ պատուէր տուեալ էր գրաւել վերստին զամենայն կալուածս նոցին որ յերկրի իւրում եւ որ ՚ի սահմանս Անտիոքայ, ընդ որս եւ զՊոնէլն նաւահանգիստ, յորմէ շահ մեծ էր ռոճկի նոցուն. եւ պահապանս կարգեալ յօթեվանս նոցին՝ ոչ թողոյր աղագս ելի եւ մտի եւ դարման գտանելոյ. եւ թէպէտ աղաչեաց պատրիարքն բառնալ զարգելն, այլ չեղեւ լսելի: Յայնժամ ըստ իշխանութեանն տուեցելոյ նմա ՚ի Քահանայապետէն՝ սկսաւ եւ սա եկեղեցական օրինօք եւ սպառնալեօք վարիլ. պայմանեաց Լեւոնի աւուրս ինչ՝ կատարելոյ զառաջարկեալն. եւ ՚ի լնուլ աւուրցն՝ կարդաց զբանադրանսն, եւ ծանոյց ամենայն Երուսաղեմացոց, զի թէ ոք ձեռն տացէ թագաւորին Հայոց ընդդէմ Տաճարականաց՝ ընդ նովին նզովիք փակիցի: Այլ ոչ ոք գտաւ ոչ օգնական նմա եւ ոչ ընդդիմակաց. նա եւ առաւել եւս խստացոյց զտագնապ ասպետացն, ՚ի սպառ նուաճեալ զամենայն տեղիս եւ զհասս նոցին, բաց յերկուց բերդից՝ յորս չեղեւ ձեռնհաս. նոյնպէս արար եւ ՚ի սահմանս Անտիոքայ, ապականելով զազարակս նոցին՝ ուր եկեալ էին ժողովել զարդիւնսն. եւ յերթալ նոցա երբեմն յամրոց մի իւրեանց՝ Հայք դարանեալք ՚ի կիրճս եւ ՚ի վերայ յարձակեալ՝ զոմն սպանին եւ զայլս վիրաւորեցին, ընդ որս եւ զկարգապետն¹⁸⁷: Զայսոսիկ լուեալ Պապին՝ արժան համարեցաւ եւ իւրովսանն խստանալ. գրեաց առ պատրիարքն նուիրակ իւր (18 մայիսի, 1211), պատուիրել եպիսկոպոսաց կողմանցն Ասորոց՝ հրատարակել ՚ի թեմս իւրեանց զբանադրանսն. զնոյն գրեաց եւ առ կաթողիկոսն Հայոց. եւս եւ առ Յովհան թագաւոր Երուսաղեմի եւ առ այլս, զի գուն գործիցեն թափել ՚ի Լեւոնէ զռոճիկ ասպետացն, կամ դարմանեցեն զնոսա: Պատմիչն Փռանկաց¹⁸⁸ ասէ, Յովհ. թագաւորի Երուսաղեմի առաքեալ յօգնութիւն Տաճարականացն՝ ձիաւորս յիսուն, առաջնորդութեամբ Ճոֆրէի Կաֆրանայ (Joroi de Caffran) եւ Ամիոնի Այսի (Amion d'Ays), եւ տեսեալ զնոսա Լեւոնի՝ դադարեալ ՚ի կռուելոյ, եւ թողեալ զբերդն:

¹⁸⁶ Թուղթք Իննովկ. ԺԴ. ԼԳ. ԿԴ. ԿԶ:

¹⁸⁷ Կարգապետ Ժամանակին էր Փիլիպ. մականունեալ de Plessis.

¹⁸⁸ Eracles, XXXI, 7.